

ՆՈՅԵՄԲԵՐ 2023

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>3</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	4
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում .....	7
1.3. Ջրահեռացման համակարգ .....	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	9
1.5. Էներգահամակարգ .....	10
<b>2. Առևտրային տնօրինություն</b> .....	<b>11</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	12
2.2. Հասույթ .....	12
2.3. Գանձում .....	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ .....	14
2.5. Ջրաչափեր .....	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	16
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>17</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	21
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն .....	22
3.6. 1-85 թեժ գիծ .....	23
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>24</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության բաժին</b> .....	<b>27</b>
5.1. Դասընթացներ/սեմինարներ .....	28
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	30
5.3 Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ .....	31
5.4. Վեոլիա Գրուպի ԲՌԿ ստանդարտների ինքնազննահատման, ընկերության համակարգում ներդրման, նոր ԲՌԿ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ .....	31
5.5. ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ .....	31
5.6. Համագործակցություն ՀՀ ՆԳ Նախարարության և ՀՀ մարզպետարենների հետ .....	31

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

## Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Անի թաղամասում նոր անցկացված ջրագծերի միացման, փոխակապակցման հետ զուգահեռ Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրվեց, հայտնաբերվեց մի քանի կորած դիտահոր փականային հանգույցներով և խցափակման արդյունքում շահագործումից հանվեց թաղամասի մի քանի հատվածի հին ջրամատակարարման ցանցի ջրագծեր, մասնավորապես 9-րդ փողոցը, Ե. Չարենցից մինչև Պ. Սևակ փողոցը պարփակված, 7-րդ փողոցը, Ե. Չարենցից մինչև Պ. Սևակ փողոցը պարփակված և 3-րդ փողոցի Ե. Չարենցից մինչև Տ. Ճարտարապետ փողոցի տարածքները: Արդյունքում, քայքայված  $D=150-300$ մմ ջրագծերի վրա ընդհանուր չափված ջրաքանակներով, խցափակումից հետո խնայվեց մոտ  $Q = 8$  Լ/վ ջրաքանակ:



● Գյումրի քաղաքի Պարոնյան փողոցում ընթացող փողոցաշինական ծրագրի շրջանակներում շահագործումից հանվեց  $D=50$ մմ պողպատե հին ջրագիծ, փոխարենը կառուցվեց նոր ջրագիծ հարակից մի քանի տան ջրամատակարարումն ապահովելու համար: Արդյունքում, շահագործումից հանվեց  $D=50$ մմ  $L=160$ մմ պողպատե ջրագիծ, կառուցվեց  $D=50$ մմ ՊԷ  $L=60$ մմ նոր ջրագիծ, խցափակումից հետո խնայվեց մոտ 1 Լ/վ ջրաքանակ:



## Արարատի մարզ

● Արարատի մարզում տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Ջող-Երասխ  $D = 225$ մմ ջրատարի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 14$ Լ/վ ջրաքանակ:





## Քաղաք Երևան

● Էրեբունի տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Արցախի պողոտա 10դ շենքի մոտ: Հին,  $D = 80$ մմ քայքայված ջրագծի  $L=30$ մ հատվածը փոխարինվեց  $D=63$ մմ ջրագծով: Արդյունքում տնտեսվեց  $Q=2$ Լ/վ ջրաքանակ:



● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Չարենցի 1 հասցեի մոտ գտնվող ՃԿՓ-ի դիտահորի մեջ  $D = 600$ մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 20$ լ/վ ջրաքանակ:



● Շահումյան տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Տիչինա - Անդրանիկ խաչմերուկում (Տիչինայի գոտի)  $D = 500$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q=14$ լ/վ ջրաքանակ:

● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Դավթաշեն 4-րդ թաղամաս 2Բ շենքի դիմաց,  $D = 150$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 9$ լ/վ ջրաքանակ:



● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Դավթաշեն 4-րդ թաղամաս 46 շենքի բակում,  $D = 150$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 6$ լ/վ ջրաքանակ:

● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Լուկաշինի թաղամաս իջնող  $D = 500$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 15$ լ/վ ջրաքանակ:



● Հյուսիս տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար ՀՀ ՊՆ տարածքով անցնող «Կաթնաղբյուր 5»  $D = 600$ մմ պողպատե ջրատարի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց  $Q = 4$ լ/վ ջրաքանակ:

## Արմավիրի մարզ

● «Էջմիածին» ենթատեղամաս. Արմավիրի մարզի Դոդս գյուղի ջրամատակարարումն իրականացվում էր մետական խողովակաշարերով, որն ամբողջությամբ գտնվում էր քայքայված վիճակում և ջրի ճնշման ավելացման դեպքում ջրագիծը վթարվում էր: Նշված բնակավայրերը սնող քայքայված թուջե և մետաղական խողովակաշարերի վրա առկա էին բազմաթիվ վթարներ և սպառողներին վայրկյանում մինչև 14 լիտր ջրաքանակ տրամադրելու դեպքում հնարավոր չէր լինում հաստատված գրաֆիկի



համաձայն ջրամատակարարում ապահովել: Ջրակորուստներից խուսափելու համար աշխատակիցների կողմից փոխարինվել է ջրագծի L=2600զմ հատված և նախկինում գյուղին տրվող վայրկյանում 14 լիտրի փոխարեն այսուհետև կմղվի 5լ/վ ջրաքանակ, որը բավարար կլինի գյուղում կանոնավոր ջրամատակարարում ապահովելու համար:

### Գեղարքունիքի մարզ

● «Մարտունի» տեղամաս. քաղաք Մարտունի, Ի.Խաչատրյան փողոցի, փողոցի նրբանցքների և փակուղիների d=100-150մմ ջրագծերը կառուցված են եղել դեռ 1960-ական թվականներին, որոնք գտնվում էին խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում և պիտանի չէին հետագա շահագործման համար, ինչի արդյունքում հաճախակի առաջանում էին վթարներ, որոնք բերում էին ջրի պղտորվածության և որակի անկման՝ տեղիք տալով բնակիչ/բաժանորդների արդարացի բողոքներին: Խնդրի կարգավորման համար աշխատակիցների կողմից սեփական ուժերով ծրագրի շրջանակներում վերակառուցվել է d=25-110մմ L=2050զմ ջրագիծ, շահագործումից հանվել է d=100-150մմ L=2600 զմ երկարությամբ վթարային վիճակում գտնվող մետաղական ջրագիծ, տեղադրվել է թվով 35 դիտահոր և թվով 35 d=20մմ բրոնզե փական: Մահմանագատման կետերում և նոր տեղադրված ջրաչափական դիտահորերում տեղադրվել և վերատեղադրվել է թվով 35 ջրաչափ: Կատարված աշխատանքների արդյունքում ք.Մարտունի, Ի.Խաչատրյան փողոցում, փողոցի նրբանցքներում և փակուղիներում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, տնտեսվել է մոտ 4,5 լ/վրկ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում:



● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից Նոր Նորք, Մուղովական փողոց 40/4 հասցեում կառուցվել է նոր d=50մմ L=90մ պոլիէթիլենային ջրագիծ: Միացման կետում կառուցվել է դիտահոր և տեղադրվել է d=50մմ փական:

● Գ.Պողոսյան /Վիլլա Հիլս-ի հարևանությամբ/ Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների և հարակից տարածքների ջրամատակարարումն իրականացվում է Արզնի 1 d=900մմ թուջե ջրատարով, որի L=21զմ/մ հատվածը ամբողջովին քայքայված էր և հաճախակի էին վթարները: «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների կողմից վերոնշյալ հատվածը փոխարինվել է d=1000մմ L=21զմ/մ պողպատե խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների և հարակից տարածքների ջրամատակարարումը կարգավորվել է և գործում է անխափան:



● Էրեբունի տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Վարդաշեն 6 փողոց 5 տան մոտով անցնող 80մմ պողպատե խողովակը գտնվում էր քայքայված վիճակում, հաճախակի էին կրկնվող վթարները: Տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված մետաղական խողովակը փոխարինվել է d=50մմ L=30զմ/մ պոլիէթիլենային խողովակով:

## Ջրահեռացման համակարգ

### Գեղարքունիքի մարզ

● «Մարտունի» տեղամաս. քաղաք Մարտունի, Երևանյան 43 և 51 շենքերի բակերի կոյուղագծերը և դիտահորները գտնվում էին քայքայված վիճակում և պիտանի չէին հետագա շահագործման համար: Խնդրի կարգավորման համար սեփական ուժերով ծրագրի շրջանակներում աշխատակիցների կողմից փոխարինվել է  $d=200$ մմ  $L=210$ զմ ծալքավոր խողովակով կոյուղագիծը և թվով 8 ե/բ դիտահոր՝ ծածկերով:



Նոյեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	775
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	19555
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	20828
Հոսակորուստի որոնում կորեյաստորով	մ	820
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	10
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2324,5
Կառուցված ջրագիծ	մ	11337,5
Կառուցված կոյուղագիծ	մ	1459
Վերացված գաղտնի վթարներ	հատ	12
Փոխարինված փական	հատ	108
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույն	հատ	442
Մաքրված դիտահոր	հատ	2150
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	10.5
<b>Վերացված վթարներ</b>	<b>Չափման միավոր</b>	<b>Քանակ</b>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1006
Ջրահեռացման ցանցում	հատ	1351
Պումպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Նոյեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1145	999	1092

### 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է նոյեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	346	3	0	0	0	1	1	0	0	0	351
Փոխարինված	280	17	9	0	2	2	10	3	8	2	333
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	318	10	1	0	2	4	2	0	0	0	337
Ընդամենը	944	30	10	0	4	7	13	3	8	2	1021

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 1021 ջրաչափ: Կատարված աշխատանքների 92%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նոյեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	0	241	0
2	Քանաքեռ-Զեյթուն	0	260	168
3	Մաշտոց	210	239	72
4	Շահումյան	0	223	175
5	Շիրակ	1530	427	65
6	Արթիկ	180	85	129
7	Ապարան	0	67	178
8	Ալավերդի	2350	35	36
9	Աշոցք	0	3	0
10	Բերդ	339	14	0
11	Իջևան	0	70	0
12	Լոռի	0	225	4
13	Նոյեմբերյան	60	11	0
14	Սպիտակ	0	18	0
15	Ստեփանավան	2510	35	0
16	Թալին	0	10	112
17	Տաշիր	0	11	0
18	Չարենցավան	0	108	0
19	Աբովյան	0	105	4
20	Հրազդան	0	82	624
21	Կենտրոն	385	253	0
22	Հյուսիս	80	256	8
23	Հարավ	0	359	12
24	Էրեբունի	0	154	28
25	Արմավիր	0	137	2
26	Արտաշատ	0	121	0
27	Էջմիածին	0	149	3
28	Աշտարակ	3250	36	352
29	Արարատ	0	66	0
30	Մասիս	0	65	0
31	Գավառ	880	39	0
32	Սևան	620	93	7
33	Մարտունի	00	28	182
34	Վարդենիս	1205	9	0
35	Ճամբարակ	32	16	0
36	Դիլիջան	0	54	0
37	Վայք	445	17	0
38	Եղեգնաձոր	220	26	7
39	Ջերմուկ	0	43	0
40	Միսիան	0	52	0
41	Գորիս	0	47	0
42	Կապան	802	79	42
43	Մեղրի	640	45	0
	Ընդամենը	15738	4413	2210



## 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանում գտված յուղի մղման պոմպերը դադարել էին աշխատել, քանի որ թողարկիչը վասսված էր: Թողարկիչը փոխարինվեց, և այժմ պոմպերը գործում են անխափան: Մաշվել էր նաև ավազի տեղափոխման կոնվեյերի պոլիէթիլեն պատյանը, որը փոխարինվեց նորով: Վերանորոգվեց արտադրամասի էլեկտրական դռներից մեկը, որը խափանվել էր էլեկտրականության պատճառով:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում տեղի էր ունեցել խցանում պայմանավորված մեծ քանակությամբ կեղտի հոսքով: Կուտակված կեղտը ժամանակին հեռացվեց, լուրջ հետևանքներ չառաջացան: Մանր ճաղավանդակի քերիչ սանրերը խախտվել էին, որոնք կարգաբերվեցին: Ներկայումս սարքավորումները գործում են անխափան:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով և այժմ օդամուղն աշխատում է բնականոն ընթացքով: Խաթարվել էր նաև խոշոր աղբի մամլիչի աշխատանքը, որը վերականգնվեց:

- Սևանի N3 և N5 կեղտաջրերի պոմպակայանում խցանվել էին հակադարձ փականները, որոնք ապամոնտաժվեցին ու մաքրվեցին և այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով:

- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանում առաջացել էր սարքավորումների ավտոմատ աշխատանքի խափանում, որը վերականգնվեց: Խցանվել էր նաև յուղի մղման պոմպը, որը ապամոնտաժվեց և մաքրվեց: Այժմ սարքավորումներն աշխատում են բնականոն ընթացքով:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանն ամբողջությամբ հոսանքազրկվել էր: Զննության արդյունքում պարզվեց, որ բարձր լարման ապահովիչները այրվել են: Արդյունքում դրանք փոխարինվեցին և այժմ մաքրման կայանն աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	59,023	28.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	50,745	28.8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	176,757	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	78,635	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	147,785	18
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	22,393	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,578	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	11,400	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	7,350	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	1,350	0	0

## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 286 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 192 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

### Աղյուսակ . Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Կատարած աշխատանք	Քանակ
1	ավտոմատ անջատիչի և թվային ռելեի փոխարինում	1
2	էլքի և մուտքի փականների փոխարինում	1
3	էլքի խողովակի ջրի արտահոսքի վերականգնում	1
4	էլքի խողովակից ջրի արտահոսք	1
5	գտիչի մաքրում	9
6	գտիչի մաքրում, օդի խցանման կարգավորում	2
7	էլ. սարքերի կարգավորում	2
8	էլ. սարքերի գնում	2
9	էլ. սնուցման մալուխի փոխարինում	1
10	էլ. սնուցման վերանորոգում	1
11	թվային ռելեի մոնտաժում	1
12	ժամային ռելեի վերաթողարկում	1
13	ժամային ռելեի մոնտաժում	3
14	ինվերտորի վերաթողարկում	8
15	ինվերտորի տեղադրում	3
16	ինվերտորի տեղադրում, շրջանցիկ և էլքի փականների փոխարինում	1
17	ինվերտորի տեղադրում, պոմպի փոխարինում, էլքի փականների փոխարինում	1
18	լոգերի տեղադրում	1
19	հետադարձ փականի գնում	1
20	հին պոմպերի ապամոնտաժում, նոր պոմպերի մոնտաժում	3
21	հին պոմպի ապամոնտաժում, նոր պոմպի մոնտաժում	1
22	հոսանքի կարգավորում	1
23	հոսքաչափի էլ. մալուխի վերականգնում	2
24	հոսքաչափի էլ. սարքերի գնում	3
25	ճնշման կարգավորում	6
26	մոնտաժի ձևափոխում	1
27	մուտքի ջրի պակասություն	1
28	մուտքին ջուր չկա	2
29	ներքին փականի փոխարինում	3
30	նոր պ/կ գնում	6
31	շարժիչը այրված է	1
32	չոր աշխատանքային ռելեն անսարք, փոխարինվեց նորով	1
33	պոմպերի ապամոնտաժում, պոմպի մոնտաժում	1
34	պոմպերի գնում, էլ. սարքերի կարգավորում	48
35	պոմպի վերաթողարկում	1
36	պոմպի ապամոնտաժում	1
37	պոմպի գնում էլ. սարքերի կարգավորում	16
38	պոմպի մոնտաժում	1
39	պոմպի վերաթողարկում	18
40	պոմպի վերաթողարկում, ճնշման կարգավորում	1
41	պոմպի վերանորոգում	6
42	պոմպի տեղադրում	1
43	ջրագրկվել է համատիրության կողմից վթարավերականգնողական աշխատանքների համար	6
44	վթար ջրագծի էլքի վրա	7
45	վթար մուտքի ջրագծի վրա	2
46	վթար պոմպակայանում, թողարկիչի փոխարինում	1
47	ցածր ճնշման ռելեի կարգավորում	1
48	օդի խցանում, պոմպի վերաթողարկում	1
49	օդի խցանման կարգավորում	1
50	պոմպերի խծուծում	7

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.12.2023 թվականի դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 611,963 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. նոյեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	674,974	583,123	86,4
	Իրավաբանական անձ	32,232	28,840	89,5

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	746,186	588,996	78,9
	Իրավաբանական անձ	37,750	27,602	73,1

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 787 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Նոյեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4227 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 11.2023
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2050	1263	290	3603
	Իրավաբանական անձ	438	144	42	624
	Ընդամենը	2488	1407	332	4227

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ նոյեմբեր ամսին փոխարինված 4227 ջրաչափերի մոտ 41 %-ը (կամ 1739 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 228,678 մ<sup>3</sup> հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



### 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Նոյեմբեր ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,607 մլն. դրամ (96 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ

SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Նոյեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 174 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 32.5 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.12.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	11,135	2,443
Բնակիչ-բաժանորդներ	7,813	1,591
Իրավաբանական անձեր	3,322	852

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 376.9 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



## 2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.12.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	716,785	587,940	82.02	36,696	27,592	75.19
	Առանց ջրաչափի	29,401	1,056	3.59	1,054	10	0.95

Տվյալների բազայում 01.12.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	888,134	383,181	43.14	40,386	7,462	18.48

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6619 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1424 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

### ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2465	2023	81.9
գ.Պոռչյան	1701	1168	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	6008	1949	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 17720, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 16022, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 4546, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5364, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2731, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4450 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 7644 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրվում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	483	212,050	39,681,521

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի նոյեմբեր ամսվա շարունակականության տվյալը, կազմում է 96.7%, ինչը նույնն է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 62 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2023թ-ի նոյեմբեր ամսին 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 231 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսն ավելացել է 286 հազար կվտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 12041 կՎտ.ժ (1.14%), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 6 պոմպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 6 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 1556 կՎտ.ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կնվազեր 13597 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



#### Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել են 84 էլ. հաշվիչներ: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) և ՕԱՇ (օր առաջ շուկա) կատարվել են առևտրային գործընթացներ, որի արդյունքում տնտեսվել է համապատասխանաբար 4,615,499 ՀՀ դրամ և 35,453 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

#### Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 25 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 18 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները: Թվով 286 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 192 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները: Իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

#### Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում հինգ հասցեներում տեղադրվել են ինվերտորային համակարգեր.


- ▶ Արցախի 18 (Er-5)
- ▶ Թաղևոսյան 12/1 (She-139)
- ▶ Արցախի 20/1 (Er-43)
- ▶ Մայիսի 9/13 (She-61)
- ▶ Գ.Նժդեհի 29,31/6 (She-159)

#### Ինվերտորային պոմպի տեղադրում

Հաշվետու ամսում երեք հասցեներում տեղադրվել են ինվերտորային պոմպեր.

- ▶ Բագրատունյանց 49,51 (She-115)
- ▶ Թումանյան 31 (Ke-35)
- ▶ Շինարարներ 15/2 (Ma-39)

Տեղադրված ընդհանուր 81 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 1,491 կՎտ.ժ 1%:




**Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ**

● Հաշվետու ժամանակահատվածում 47 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

**Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան**


● 2023թ. նոյեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 246 075 կՎտ/ժամ (24,57)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա**



● Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլեկտրական էներգիայի ծախսն ավելացել է 225 782 ԿՎտ/ժ/ամիս կամ 13,80%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

**Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա**



**«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան**

● Ընդհանուր էլ. էներգիայի ծախսն ավելացել է 532 095 ԿՎտ/ժամ 14,03%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
ՃԿՓ-ների, հոսքաչափերի տվյալների բազայի թարմացում	թարմացում	1
SCADA համակարգում առկա կետային տեղեկատվություն տեղորոշում և համապատասխանեցում ԱՏՀ բազային	տեղորոշում	1
Աշտարակ, Ճամբարակ, Ջերմուկ, Մարտունի, Վայք, Եղեգնաձոր քաղաքների հիդրավիլի մոդելների ուղղում, թարմացում, ստուգում SCADA համակարգում առկա տվյալներով	քաղաք	6
302 տեխնիկական պայմանների թվայնացում (440 բաժանորդ)	տեխպայման	302
էլեկտրամատակարարման (36), գազամատակարարման (16), կապի միջոցների (36) նախագծերի թվայնացում, համաձայնեցում տեղամասերի հետ	թվայնացում	1
«ԱՏՀ»-ում առկա քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2695
«ԱՏՀ»-ում առկա մարզերի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9498
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	502
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	31
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում	կետ	870
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական կետերի ուղղում	կետ	40
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1819
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1836

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.


● Շոր-Շոր պոմպակայանի մղման d=500մմ ջրատարի վրա հայտնաբերվել է նախկինում տեղադրված տափօղակ, որը հնարավոր դիմադրություն էր ստեղծում ջրատարում: Տափօղակն ապամոնտաժվել է և պարզվել, որ d=500մմ ջրատարում տափօղակի չափը եղել է 370մմ:



● Արզնի 2 ջրատարի վրա առկա վրաների վերացման նպատակով պատվիրվեց հատուկ տեխնիկա, որի միջոցով բացվեցին ջրատարի վրաները, նախապատրաստելով ջրատարի կանգառի ժամանակ վրաները վերացնելու համար:



● Արարատյան ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվել է վթար, ինչի մասին տեղեկացրել ենք տեղամասին:



● Ղազարավան-Էջմիածին ջրատարի շրջայցի ընթացքում հայտնաբերվեց պոկված անհայտ միացում: Առկա էր 1լ/վ արտահոսք: Անմիջապես վթարը վերացվեց «Էջմիածնի» Շահագործման տեղամասի կողմից:

● Հաշվետու ամսում կանխվեց Արզնի 1 ջրատարի վթարված հատվածի վրա առկա  $\approx 3\text{լ/վ}$  արտահոսքը:



● Արզնի 2 ջրատարի վրա առկա չաշխատող օդահեռ փականը փոխարինվել է նոր օդահեռ փականով:



● Արզական ջրատարի շրջայցի ընթացքում հայտնաբերվել է անհայտ միացում, որով հոսում էր  $3\text{լ/վ}$  ջրաքանակ: Այդ մասին հայտնել ենք համապատասխան ստորաբաժանմանը՝ խնդիրը պարզելու համար:



### 3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության» կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Իջևան, «Ազատամուտ» քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի շարքից դուրս եկած լողանային տվիչը փոխարինվել է նորով՝ հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար:



● Քաղաք Գյումրի, «Արեգնադեմ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով փոխարինվել է հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած ինժեկտորը:

● Քաղաք Իջևան, «Գետահովիտ» քլորակայանում ապամոնտաժվել և մոնտաժվել է հեղուկ քլորի Ֆասաված քլորագծերը հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Եղեգնաձոր, «Գետափ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի Ֆասաված քլորագիծը դ-32մմ:

● Քաղաք Երևան, «Ծարավադրյուր» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի հնամաշ և շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է նորով, հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Գյումրի, «Կապս» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած բաժանարար հանգույցը (manifold) փոխարինվել է նորով:

Քաղաք Գառնի, «Օզոնակայան» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի հնամաշ և շարքից դուրս եկած սարքավորումներն ապամոնտաժվել և մոնտաժվել են, հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



● Քաղաք Իջևան, «Ազատամուտ» քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հիպոքլորիդի հաբի համակարգի շարքից դուրս եկած դետալները փոխարինվել են նորերով:

### 3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 43942 զանգ: Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 13007 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է զանգ 10435 (80.2%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2572 զանգ (19.8%):

● Շահագործման վերաբերյալ ստացվել է 30935 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 23665 զանգ (76.5%), իսկ մարզերինը՝ 7270 զանգ (23.5%):

● 2022թ. նոյեմբեր ամսվա համեմատ՝ 2023թ. նոյեմբեր ամսին 12,31%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 14,74 %-ով:

● 2022թ. նոյեմբերի համեմատ՝ 2023թ. նոյեմբեր ամսին 42%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 42%-ով՝ 5 բուսային ավել զանգերի քանակը և 59%-ով՝ հայտարարությունների լսուժն ավտոմատ ծառայության միջոցով:

#### Զրամատակարարման գրաֆիկի բողոքներ

● 2022թ. նոյեմբերի համեմատ 2023թ. նոյեմբեր ամսին 14.69%-ով ավելացել են ջրամատակարարման բողոքները:


#### 185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիթ

	Ստորաբաժանում	2022	2023	Տարբերություն
		Նոյեմբեր	Նոյեմբեր	
Առևտրային	Ընդամենը	11581	13007	12.31%
	Երևան	9075	10435	14.99%
	Մարզեր	2506	2572	2.63%
Շահագործում	Շահագործում	26961	30935	14.74%
	Երևան	19319	23665	22.50%
	Արարկիթ	3670	4673	27.33%
	Քանաքեռ-Զեյթուն	1459	1870	28.17%
	Մաշտոց	3412	2725	-20.13%
	Շահումյան	1558	3073	97.24%
	Շենգավիթ	3034	2233	-26.40%
	Կենտրոն	3066	4305	40.41%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	1319	2410	82.71%
	Էրեբունի	1801	2376	31.93%
	այդ թվում կոյուղու վթար	132	191	44.70%
	այդ թվում դիտահորի խցանում	4422	5825	31.73%
	ՄԱՐԶԵՐ	7642	7270	-4.87%
	Հարավ	3640	3084	-15.27%
	Հյուսիս	4002	4186	4.60%
այդ թվում կոյուղու վթար	72	55	-23.61%	
այդ թվում դիտահորի խցանում	2812	3124	11.10%	
Ընդամենը	38542	43942	14.01%	

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ







Նոյեմբեր ամսվա կարևորագույն իրադարձությունը «Վեոլիա Ջուր» ընկերության սակագնային հայտի հաստատումն էր ՀՀ ՀՕԿՀ-ի կողմից, ըստ որի՝ 2024 թվականին խմելու ջրի սակագինը սպառողների համար չի թանկանա: Պետական սուբսիդավորումը կշարունակվի, և սպառողները 2024 թվականին կշարունակեն վճարել նույն գումարը 200.47 դրամ: Լրատվամիջոցներն իրենց էջերում այս լուրը լուսաբանեցին չեզոք առանց որևէ մեկնաբանության: Հաշվետու ամիսը սկսվեց խնդրահարույց, մինևս այն ժամանակ կարևոր նշանակություն ունեցող «Արզնի 1» 900 մմ-ոց



մայրուղային ջրատարի վթարային հատվածի նորոգման աշխատանքներով: Իրականացվող աշխատանքների ծավալը հաշվի առնելով, ինչպես նաև խնդրին արմատական լուծում տալու համար, ՎեոլիաԹիմը նախապես պլանավորեց շինարարական աշխատանքները, հայտարարեց ջրանջատում, ապա նոր սկսեց ջրատարի 20 մետր հատվածի փոխարինման աշխատանքները: Հանրային կապերի ծառայությունը Պտղնիի ձորում ընթացող աշխատանքներին ֆեյսբուքյան էջում անդրադարձավ 3 անգամ, ինչպես նաև ATV հեռուստատալիքի հետ պատրաստեց ռեպորտաժ՝ հանրությանը տեղյակ պահելով շինարարական ողջ աշխատանքների, ինչպես նաև ջրամատակարարման վերականգնման ժամի մասին:

Իսկ ընդհանրապես, նոյեմբեր ամսին շատ էին Երևանում և հանրապետության տարբեր բնակավայրերում ավելի վաղ սկսված մեծածավալ ջրաշինարարական աշխատանքների ավարտի մասին հրապարակումները: Եվ այսպես, հայտարարվեց Լոռու մարզի Հազվի գյուղի ջրամատակարարման նոր ցանց ունենալու մասին: Այստեղ 110 բաժանորդի համար կառուցվեց 2400 գծամետր պոլիէթիլեն խողովակաշար և արդյունքում 13լ/վ-ի փոխարեն այժմ գյուղին տրվում է 2 լիտր ջուր, որը լիովին բավարար է շուրջօրյա կայուն և որակյալ ջրամատակարարում ապահովելու համար:

Ավարտվեցին նաև Արմավիրի մարզի Դոդս գյուղի 2,6 կմ երկարությամբ մուտքագծի կառուցման աշխատանքները, որոնք սկսվել էին ամռանը և իրականացվեցին մի քանի փուլով: Իջևանում ևս ավարտվեց հորդառատ անձրևների հետևանքով առաջացած սողանքի գոտին շրջանցող «Անապատ» ջրագծի վերակառուցումը: Առաջացած սողանքի պատճառով քաղաքին տվյալ հատվածով ջուր չէր հասնում: Կառուցելով 204 գծամետր խողովակաշար ՎեոլիաԹիմը կարողացավ լիարժեք գործարկել ջրագիծը:

Ամբողջ տարի, Կապանում ընթացող բարեկարգման աշխատանքներին զուգահեռ ՎեոլիաԹիմը փոխեց ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը: Այս աշխատանքները սկսվելու են Վանաձորի կապերի ծառայության կողմից: Ամփոփելով Կապանում ընթացող աշխատանքները այսօր արդեն քաղաքի կեսից ավելին ունի ջրամատակարարման և ջրահեռացման նորացված ներքին ցանց:

Ավարտվեցին նաև Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Արովյան և Շահումյան փողոցների մի քանի կիլոմետրանոց ջրագծերի վերանորոգման աշխատանքները: Սակայն օգտվելով նոյեմբերի բարենպաստ եղանակից, ՎեոլիաԹիմը սկսեց նաև Խաչատրյան փողոցի 1900 գծամետր ջրագծի ու մուտքագծերի վերակառուցումը: Նոր ջրագծերով ջուր սկսեցին ստանալ նաև Փարաքար համայնքի Արարատյան և հարակից 7 փողոցները: Շուրջօրյա ջրամատակարարմամբ ապահովվեցին Վանաձոր քաղաքի Դիմաց և Զուխաջյան թաղամասերը: Ընշման կարգավորիչ փականներ տեղադրելով կարգավորվեց Արագածոտնի մարզի Օհանավան գյուղի մի մասի ու Մուղնի գյուղի ջրամատակարարումը:



Նոյեմբեր ամսին ակտիվորեն շարունակվեցին կարևոր նշանակության ջրատարների և ջրաղբյուրների վրա հոսքաչափերի տեղադրման աշխատանքները: Հոսքաչափեր տեղադրվեցին Գյումրի քաղաքը սնող «Ղազանչի 1, 2», «Ձուգաղբյուր», «Կրասար» ջրաղբյուրների ջրատարների, ինչպես նաև Վայոց Ձորի մարզի Մալիշկա գյուղը սնող «Մեծ աղբյուր» ջրատարի վրա: Հոսքաչափի միջոցով միանալով «Scada» համակարգին՝ հնարավոր է դառնում առցանց կառավարել և հետևել դրանց աշխատանքին, ֆիքսել վթարները, հաշվառել ջրաքանակը: Բազմաթիվ էին նոյեմբեր ամսին գրանցված վթարներն ու դրանց վերացման աշխատանքները: Վթարավերացման աշխատանքներ

իրականացվեցին «Հացառատ-Լճաշեն» 500 մ-ոց պողպատե ջրատարի վրա, Զարենցավանի Շահումյան փողոցում, Գեղարքունիքի մարզի Վարսեր, Վարդենիս գյուղերում, Երևանի Տիչինայի փողոցում, «Կաթնաղբյուր» 5-րդ ջրատարի վրա, Տավուշի մարզի Բերդ քաղաքում, Սյունիքի «Շաքիի» ջրատարի վրա և այլ վայրերում:

Աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ կանխել մեծ ջրաքանակի կորուստ:

Ընկերության ֆեյսբուքյան էջում մի քանի անգամ բաժանորդներին տեղեկացվեց սպասարկման որոշ գրասենյակների աշխատանքային օրերի փոփոխությունների մասին: Հրապարակումներ եղան նաև ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, ինչպես նաև վթարային և պլանային ջրանջատումների մասին:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



## 5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Ընկերության Հարավ Շահագործման տնօրինության թվով 225 և Երևան Շահագործման տնօրինության թվով 33 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 5 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:

- ▶ Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Փոտրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց և
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով դասընթաց:



● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 29 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.

- ▶ «Քլորակայաններ շահագործող, սպասարկող անձնակազմի մասնագիտական որակավորման» դասընթաց/գիտելիքների ստուգում,
- ▶ «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով դասընթաց,
- ▶ Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները թեմայով դասընթաց,
- ▶ Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:



● ՈԱԱ բաժինը, հիմք ընդունելով ընկերության աշխատակիցների մասնագիտական որակավորումը բարձրացնելու անհրաժեշտությունը, մատակարարվող խմելու ջրի որակի հսկողության գործընթացի անընդհատ բարելավումը և նմուշառողների խմելու ջրի նմուշառման տեխնիկայի և մեթոդաբանության վերաբերյալ հմտությունների և գիտելիքների ամրապնդման անհրաժեշտությունը, Ջրի որակի վարչության հետ համատեղ ընկերության թվով 20 աշխատողի համար կազմակերպեցին և իրականացրեցին ստորև ներկայացվող 3 մոդուլից բաղկացած առկա դասընթացները.


● «Խմելու ջրի որակի հսկողությանը ներկայացվող պահանջները» թեմայով որակավորման տեսական և գործնական դասընթաց,

● Վեոլիա Գրուպի «Երթևեկությունն աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները թեմայով դասընթաց,


● Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները» թեմաներով դասընթաց:



*2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ*



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 4 քլորակայանում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուսասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 8 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2023 թ. իրականացված անվտանգության ստուգայքների քանակներն ըստ օբյեկտների



### 5.3 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Ելնելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և ելնելով համակարգերում տեխնածին վթարների կանխարգելման և բացառման, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում, Արտադրական Վտանգավոր Օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքների շրջանակներում, Ընկերությունը իրականացրել է վերանորոգման, կարգաբերման և այլ տիպի աշխատանքներ:

### 5.4 ՎԵՈՒԻՍ ԳՐՈՒՊԻ ԲՈՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆՈՐ ԲՈՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Հաշվետու ամսում իրականացվել է Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի կառավարման թվով 1 ստանդարտի (Աշխատանքներ փակ տարածքներում) ինքնագնահատման աշխատանքներ:
- Միաժամանակ իրականացվում է գնահատված ստանդարտների Ընկերության համակարգում ներդրման աշխատանքներ:

### 5.6 ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՊՄ-ՆԵՐԻ ՁԵՆՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Հաշվետու ամսում ևս իրականացվել է ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների կարիքների գնահատման, անհրաժեշտ քանակների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ:

### 5.6 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՄԱՐԶՊԵՏԱՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ

● Համաձայն ՀՀ Արմավիրի մարզպետի Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, 2023թ, նոյեմբերի 23-ին և 24-ին, Ընկերության «Հարավ» Շահագործման տնօրինության «Արմավիր» և «Էջմիածին» շահագործման տեղամասերը՝ ՈԱԱ բաժնի համակարգմամբ, Արմավիրի մարզպետարանում մասնակցեցին «Ախուրյանի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնասիրությունը, որի վերաբերյալ մշակվեց գեկույց և ներկայացվեց ուսումնասիրության ղեկավարին:





«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am